# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Դդմաշեն, 098 661354 ddmashen.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 18

## <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ>> ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՒՄԱՐԸ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ կետի և 35-րդ հոդվածի 15-րդ կետի՝ ավագանու հաստատմանը ներկայացվեց <<Հայաստանի համայնքների միություն>> իրավաբանական անձանց միության Դդմաշեն համայնքի 2018 թվականի անդամավճարի գումարը փոխանցելու մասին որոշման նախագիծը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի պահանջով և հիմք ընդունելով Դդմաշեն համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 12-ի «2018թ. տարեկան բյուջեն հաստատելու մասին» թիվ 2-Ն որոշումը.

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Թուլատրել Դդմաշեն համայնքի ղեկավարին համայնքի վարչական բյուջեի նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին 4819 հոդվածից 28620 դրամ փոխանցել <<Հայաստանի համայնքների միություն>> իրավաբանական անձանց միությանը՝ որպես Դդմաշեն համայնքի 2018 թվականի անդամավճար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. Ավետիսյան Տիգրան
2. Կիրակոսյան Հրահատ
3. Հովհաննիսյան Գուրգեն
4. Ղարիբյան Էդիկ
5. Մելքոնյան Ձավեն

**Համայնքի ղեկավար՝ Ավետիս Ավետիսյան**